# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՖԻԼՀԱՐՄՈՆԻԱ

Հայֆիլհարմոնիան մայիսի 23-ին, ժամը 18-ին Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոնում կազմակերպում է երգահան, խմբավար, դիրիժոր **ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍՅԱՆԻ** (ԱՄՆ) **ծննդյան 60-ամյակին** եւ ստեղծագործական գործունեության **40-ամյակին** նվիրված համերգ-հանդիսություն:

**Մուտքը հրավիրատոմսերով:**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Վաճառվում (Է) АВИА-31Н մակնիշի 1985 թ. արտադրության բեռնատար ավտոմեքենա (գինը $ 3000) եւ 1989 թ. արտադրության ГАЗ 66 մակնիշի ավտոբուս (գինը $ 2000): Հնարավոր է նաեւ փոխանակում: Վճարումը կարելի է կատարել նաեւ փոխանցումով:

Հեռ. 25-08-46, 61-37-38

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայրենական եւ արտասահմանյան կենցաղային էլեկտրական սարքավորումների նորոգում

Գյուլբենկյան (Կուտուզովի) 41

Հեռ. 22-22-37

## ՇՏԱՊ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

*2 սենյականոց բնակարան 5 հարկանի քարե շենքի 1-ին հարկում, Դեմիրճյան 17 շենք:*

*Հեռ.՝ 523056*

## ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

երկհարկանի տուն առանց ներքին հարդարանքի Նոր-Արեշ 31 փողոցում:

**Հեռ. 45-59-99, 58-18-41**

## ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

**2 սենյականոց բնակարան Նորքի 4-րդ զանգվածում, հեռ.՝ 640321:**

# ԵՐԵՎԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

հայտարարում է 1997-98 ուսումնական տարվա ընդունելություն հետեւյալ մասնագիտությունների գծով.

1. Իրավագիտություն
2. Միջազգային հարաբերություններ
3. Ռոմանագերմանական (անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն)
4. Արեւելագիտական (արաբերեն, պարսկերեն)
5. Հայոց լեզու եւ գրականություն
6. Ժուռնալիստիկա
7. Ֆինանսներ եւ վարկ
8. Տարրական կրթության մանկավարժություն եւ մեթոդիկա

Փաստաթղթերը ընդունվում են մայիսի 20-ից սեպտեմբերի 5-ը: Հասցեն Երեւան, Կոմիտաս, Վրացական 22, ճարտարագիտական համալսարանի 8-րդ մասնաշենք («Նաիրի» ֆաբրիկայի հարեւանությամբ)

Հեռախոս 23-01-15 23-01-60 24-12-08 53-75-97 58-24-29 74-05-54

## ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

3 սենյականոց բնակարան, ավտոտնակով, Վրացական փողոցում:

ՀԵՌ.՝ 25-11-87

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կխնամեմ երեխա 10 ամսականից բարձր տարիքի:

Հեռ. 24-88-56:

## ՎԱՃԱՌՎՈՒՄ Է

Առանձնատուն, 80 քառ. մ նկուղ-ավտոտնակով եւ երկու բնակելի հարկով (առանց ներքին հարդարանքի), «Ջվարթնոց» կինոթատրոնի մոտակայքում (Մոնումենտ): Կա նաեւ մրգատու ծառերով փոքրիկ այգի:

Զանգահարել՝ 27 22 57 ժամը՝ 10-16, 58 33 26 ժամը՝ 18-23

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

## ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ

Հայաստանի ամերիկյան համալսարանը դիմումներ է ընդունում մագիստրոսի գիտական աստիճան շնորհող համեմատական եւ միջազգային առեւտրային իրավունքի երկամյա ծրագրի համար: Լիցենզավորված ոչ պետական բուհերի շրջանավարտները կարող են դիմել պայմանականորեն. գրավոր պայմանները ձեռք բերելու համար խնդրվում է դիմել ՀԱՀ-ի ընդունելության գրասենյակ:

Ծրագիրը համեմատական ակցենտով կուսումնասիրի եվրոպական մայրցամաքային իրավունքի եւ անգլո-ամերիկյան իրավունքի համակարգերի իրավական ավանդույթները եւ կունենա երկու ուղղվածություն: **Համեմատական սահմանադրական իրավունքի** առարկաները կընդգրկեն սահմանադրականության, իրավական կանոնակարգման, օրենսդրական նախագծման, հասարակության եւ անհատի իրավունքների հիմնահարցերը, ինչպես նաեւ միջազգային համաձայնագրերին եւ պայմանագրերին վերաբերող խնդիրների ուսումնասիրությունը: **Միջազգային գործարարության իրավունքի** շրջանակներում կուսումնասիրվեն շուկայական տնտեսության, միջազգային հանրային իրավունքի եւ միջազգային գործարքների հիմնական դրույթները, պայմանագրային հարաբերությունները, միջազգային ապրանքային առեւտուրը, միջազգային ֆինանսական իրավունքը եւ վեճերի լուծման մեթոդները: Համեմատական եւ միջազգային առեւտրային իրավունքի ծրագրի հիմնական նպատակն է հնարավորություն տալ ուսանողներին օժանդակել իրենց երկրի ա) քաղաքականության մշակման եւ օրենսդրական գործընթացների եւ բ) զարգացող շուկայական տնտեսության իրավական հիմքերի ստեղծմանը:

Դիմորդները պետք է ունենան **իրավաբանական բարձրագույն կրթություն** եւ **անգլերեն լեզվի մասնակի իմացություն:** Դիմորդները պետք է ներկայացնեն դիպլոմ եւ ներդիր իրենց գնահատականներով, երեք երաշխավորագիր նամակ, լրացնեն դիմում եւ ֆինանսական հնարավորությունների մասին տեղեկանք:

Փաստաթղթերի ընդունման կանխավճարը կազմում է ԱՄՆ 10 դոլարին համարժեք դրամ, որը պետք է մուծել փաստաթղթերը հանձնելիս: **1997 թ. հուլիսի 23-ը** փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետն է:

Բոլոր դիմորդները **1997 թ. հուլիսի 25-ին** կհանձնեն անգլերեն լեզվի իմացությունը գնահատող քննություն (բացառությամբ այն դիմորդների, ովքեր վերջերս TOEFL քննությունից ստացել են 550 եւ ավելի միավոր): Առաջին փուլով անցած այն դիմորդները, որոնք չեն բավարարի անգլերեն լեզվի իմացության պահանջված մակարդակը, կմասնակցեն 1997 թ. սեպտեմբերից մինչեւ 1998 թ. ամռան վերջը ՀԱՀ-ում անցկացվող անգլերեն լեզվի արագացված ծրագրին: Անգլերեն լեզվի արագացված ծրագրի ուսման վարձը կազմում է ԱՄՆ 300 դոլարին համարժեք դրամ: Նախանական ծրագիր ընդունվելը 1997 թ. հուլիսի վերջին, որոշ դիմորդների հետ հարցազրույցներ կանցկացվեն: Դիմորդների անունները ու հարցազրույցների օրերը կփակցվեն ՀԱՀ-ում:

Հիմնական ծրագրում վերջնական ընդունելությունը կկատարվի դիպլոմի ներդիրի միջին ցուցանիշի եւ նախապատրաստական փուլում դիմորդների ցուցաբերած առաջադիմության հիման վրա: Հիմնական ծրագիր ընդունված բոլոր ուսանողները պետք է ՀՀ կրթության եւ գիտության նախարարության հետ ստորագրեն ավարտելուց հետո երեք տարի Հայաստանում մնալու եւ աշխատելու մասին պայմանագիր:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ՀԱՀ-ի ընդունելության գրասենյակ: Հասցեն Մարշալ Բաղրամյան 40, առաջին հարկ 19 սենյակ, հեռախոս 27-16-29

ՀԱՀ-Ը ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԿՐՕՆԱԿԱՆ, ՍԵՌԱՅԻՆ ԿԱՄ ԱԶԳԱՅԻՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԴՐՍԵՒՈՐՈՒՄ

# Օրը՝ մեկ Մոսկվայում

*«Հայկական ավիաուղիների» 910 չվերթ*

*Երեւան - Մոսկվա - Երեւան*

*Թռիչքը՝ առավոտյան 8.40*




Երեւան, Մոսկովյան 18

Հեռ. 58-39-69

«ՍՓՅՈՒՌ» ՏԵՂԵԿԱՏՈՒ - ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԻ ԵՎ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ՄԱՍԻՆ ՀԵՌԱԽՈՍՈՎ 589167 581351

«Պարբերական» հրատարակչության տպարան. Երեւան-23, Արշակունյաց 2. Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Պատվեր 582. Տպաքանակը՝ 3000. Ստորագրված է տպագրության՝ 20.05.1997. Գինը 100 դրամ